

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՒՆԵՐԸ

Ա. Ա. ՕՐԱԲԱՇՅԱՆ

Նավասարդ բառը, որ հնդեվրոպական ծագում ունի և մտել է հայերենի մեջ նոր-տարի, Տարեմուտ իմաստով, բարդ բառ է, բաղկացած նավա (նոր) և սարդ (տարի) արմատներից¹։ Սաղոր հայերենում մնացել է երիտասարդ, ավսարդ բառերի մեջ նույն իմաստով։ Ուշադրություն ենք հրավիրում հետևյալի վրա։ Գ. Ա. Մելիքիշվիլին գրում է. «^Dsardi—ուրարտացիների աստվածուհիներից մեկը (տե՛ս ^D'arubani)։ Ակնհայտ է, որ Sarduri (տե՛ս) արքայական անունը կազմված է այդ աստծո անունից և քանի որ այն գրվում է Րշտար աստվածուհու ասուրական գաղափարագրով, ապա ուրարտացիների sardi-ն, հավանորեն, ասորեստանցիների Իշտար աստվածուհուն համանման աստվածուհի է եղել»²։

Ուշադրության է արժանի նաև, որ ուրարտերեն կա selardi բառը, որ լուսնի աստծո անունն էր։ «...^DSIN Շելարդի աստվածը (լուսնի աստվածը)։ Այդ գաղափարագրի համար selardi ընթերցումը ստացվում է № 27 արձանագրության 41-րդ տողից (այդ տողի ^Usi - e-la - ar - di համապատասխանում է նույն արձանագրության 7-րդ տողի ^Dsin)»³։

Նավա կամ նավ բառը, որ նշանակում է հոր, և նավասարդ բառաբարդության մեջ պարսկերենից է փոխանցվել հայերենին, միջին պարսկերենի բարբառներում նշանակել է նաև լուսին⁴։

Իրանական հիշյալ նավա-ն ծագում է հնդեվրոպական newo հիմքից։ Հնդեվրոպական նույն արմատից է ծագում և նոր բառը, որը կազմված է հիշյալ newo հիմքից և ro մասնիկից, որ ինչպես պարսկերեն, այնպես էլ հայերեն բարբառներում նշանակում է նորոգված լուսին⁵։

Այդ ընկալումը իր արտահայտությունն է գտել նաև ազգագրական սո-

¹ Ե. Պողոսյանը իր «Նոր տարվո տոներ հին և նոր հայոց քով» (Վիեննա, 1952) աշխատության մեջ նավասարդ բառի բացատրության համար այս ծանոթագրությունն է տալիս (էջ 11, ծան. 25)։ «Նավասարդ պարսկերենն փոխ առնված բառ մըն է և կը նշանակէ Նոր տարի (Հ. Հյոբերշման, Հայ քեր., էջ 202)։ Նավասարդ սանսկրիտ նավասարատա (նոր տարի, ամանոր) բառին հայացած ձևն է։ Նուա արիական ժողովուրդներու հասարակաց բառ մըն է. հայերեն՝ նոր, հին պարսկերեն՝ նեվի, նոր պարսկերեն՝ նեվ, հունարեն՝ նեոս ըսել է։ Իսկ սարդ-ը (տարի), որուն նոր պարսկերեն ձևն սալ, մեր լեզվին երիտասարդ բառին մեջ անեղծ մնացեր է (Դ. Խաչկոնց, Բյուրական, Կ. Պոլիս, 1898, էջ 53, Հմմտ. Հնդ. նախալեզու, էջ 70)։ Հ ա կ ո Ր ո ս Տ ա շ յ ա ն, Ուսումն դասական հայերէն լեզվի (Վիեննա, 1920, էջ 511)»։ Սեյսը գտնում է, որ սարդը, պահելով իր նշանակությունը, խաղական «տարի» բառից է փոխառնված (տե՛ս Հ. ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 5, էջ 69)։

² Г. А. Мелникшвили, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 440։

³ Նույն տեղում, էջ 382։

⁴ P. Horm, Sammlung Indogermanischer wörterbücher, IV, Grundriss der Neu-persischen Etymologie, 233, 1045.

⁵ Հ. ր. Աճառյան, Գաղափարական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 815։ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 505։

Ց. Հանդես, № 3

վորույթներում: Վասպուրականում, օրինակ, ընդունված էր, որ մեծ մայրը նորածին երեխային դուրս էր բերում նորած լուսնի դեմ և ասում. «Նոր, նոր, թաժա թագավոր»⁶: Այս նույն սովորությունը կար նաև Հայաստանի այլ շրջաններում⁷. մարդիկ հավատում էին, թե նորալուսինը կարող է բախտավորություն տալ նորածին երեխային: Նույն հավատալիքի զուգահեռ մի արտահայտություն է եղունգի վրա դուրս եկած և որոշ բարբառներում «նոր» կոչվող բծերը նոր հագուստ ունենալու նախանշան համարելը: Ժողովրդի մեջ նոր նշանակում է նաև ավագ ուրբաթ (Հուլայի՝ ութի-ուրբաթ) օրը դարբինների կողմից չար աչքի դեմ պատրաստվող մետաղյա նշանը, որ տնայայմանորեն լուսնի ձևն էր ունենում⁸: Ինչպես տեսնում ենք, նշված բոլոր դեպքերում նոր բառը կապվում է լուսնի հետ: Կարծում ենք, որ նավասարդ բառի մեջ նավա բաղադրիչը երբեք ունեցած պետք է լինի նաև լուսին իմաստը: Այդ բանը հաստատող մատենագրական վկայություններ ևս կան. «...զգարնանամուտն տարեմուտ առնէին ամենայն ազգք, և ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն: զառաջին լուսինն, զարնան լուսին, անուանէին առաջին և զկնի երկրորդ լուսին, և երրորդ և չորրորդ մինչև ցնրկոտասներորդն»⁹:

Եթե սրա հետ նկատի ունենանք նավասարդի մեջ նավա բառի կապը լուսնի, նորի հետ, դուրս է գալիս, որ նավասարդ թերևս նշանակել է լուսնի տարի, որ միաժամանակ նշանակել է նոր տարի, տարեմուտ, ամառնու¹⁰:

Նավասարդի լուսնի տարի իմաստը ամենից շատ կա ամառնու բառի մեջ (որ նավասարդ բառի հայերենն է): Այստեղ նոր բառը (չմոռանաք, որ այն բարբառներում նշանակում է լուսին) ամ-տարի բառի հետ արտահայտում է նույն տարեմուտ կամ նոր (նոր-ի, լուսնի) տարի իմաստը:

Եթե դարձյալ հիշենք, որ Ա՝ 1999 ձևագրի վերը հիշված հատվածում «նոր լուսին», «առաջին լուսին» համարվում է զարնանային լուսինը, որ է զարնանային օրահավասարի լուսինը, այս հասկանալի կդառնա, թե ինչու մեր մատենագրության մեջ նույնություն են տեսնում զարնանային օրահավասարը կրող մարտ ամսի և նավասարդի՝ տարեմուտի ամսվա միջև: Այն ժամանակից, երբ մենք գրավոր կամ բանավոր տեղեկություններ ունենք նավասարդի մասին, այն ընկալվում էր իբրև նոր տարվա սկիզբ, տարեմուտ, ամանոր: Հատկանշական է, որ հենց այս ամենանախնական իմաստով, բայց ոչ պատմական Հայաստանի որոշ շրջաններում պահպանվել է մինչև մեր օրերը¹¹:

6 Գ. Սրվանձտյան, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 105:

7 «Ազգագրական հանդես», 1897, գիրք Բ, էջ 270: Բ. Եղիազար Կարապետյան, Սասուն. Ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 96:

8 ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության սեկտորի արխիվ. Մարտունու շրջանում 1956 թ. գիտարշավի ժամանակ մեր հավաքած նյութերը: Նաև՝ Կ. Մելիք-Փաշայան. Անախտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 70—71:

9 Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձևագիր N° 1999, էջ 75ա:

10 «Նոր բաղդիր Հայկազյան լեզվի», հատ. 1, էջ 50: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 179: Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, էջ 55, 179:

11 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, 1969—1972 թթ. գիտարշավների ժամանակ մեր զրի առած նյութերը: Այսուհետև, բոլոր դեպքերում խոսքը վերաբերում է մեր զրի առած նյութերին:

Հայտնի է, որ հայկական ամիսների ցուցակում նավասարդ կոչվում է առաջին ամիսը: Սակայն հարցն այն է, որ նավասարդը միշտ որոշակի ամսվա անուն չի եղել:

Արեգակնային տոմարի առաձնահատկության համաձայն, Ամանորը թափառիկ էր: Նավասարդ (Ամանոր) անունը կրում էր այն ամիսը, որի հետ համընկնում էր նոր տարին: Ազգային լուսնային, ապա լուսնաբանականային տոմարի համաձայն Մարտ-Նավասարդ ամիսն իր զարնանային օրահավասարով Ամանորի կրողն էր և որովհետև նավասարդ սկզբում նշանակել է միայն նոր տարի, նոր տարվա սկիզբը, կամ, որ միևնույնն է, առաջին լուսին, այդ պատճառով այն ամիսը, որի ընթացքում տեղի էր ունենում զարնանային օրահավասարը, համարվում էր նավասարդ, մանավանդ որ զարգացման այդ փուլում ամիսներն անուններ չունեին: Հետագայում միայն, երբ կանոնավորվում և հաստատուն են դառնում տոմարական հաշվումները, նավասարդ է անվանվում տարվա առաջին ամիսը: Տարվա ամիսների հերթական շարքում նավասարդը առաջինը դարձնելով, տոմարագետները այլ, տոմարական կարգի նկատառումներից բացի, ամենայն հավանականությամբ, նկատի են ունեցել այդ անվան նաև տարեմուտ՝ Ամանոր իմաստը:

Հովհան Մամիկոնյանը նավասարդը հիշատակում է որպես ամսանուն: «Եւ տաւն սրբոյ Կարապետին տայր կատարել, որ աւր մի էր նաւասարդի», — կարդում ենք նրա «Պատմութիւն» մեջ¹²: Փափստոս Բուզանդը, Արշակի կողմից Դնելի շարանենգ սպանության պատմությունն անելիս, նույն հատվածում նավասարդն առաջին անգամ օգտագործում է որպես ամսանուն, երկրորդ անգամ՝ իբրև տոնի անուն¹³: «...Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն...» և ապա «...եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զտօնս նաւասարդաց առանց քո անցուցանել»: Ինչպես ցույց են տալիս բերված վկայությունները, հայոց հնագույն մատենագիրներին նավասարդն արդեն հայտնի էր և օգտագործվում էր իբրև ամսանուն: Իսկ հորքանկանում էին օգտագործել այն իբրև տոնի անուն, անպայման դա նշում էին: Ավելին, Ազաթանգեղոսը ուղղակի ասում է, որ նավասարդը հները ըմբռնում էին իբրև ամսանուն, իսկ նոր տարվա տոնը անվանում է «Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տոն», նվիրված «Հիւրընկալ դիցն Վանատրի» և նշում է, որ այդ տոնը կատարվում էր նավասարդ օրվան (տարվա առաջին օրը) նվիրված ուրախության առթիվ: «Եւ զհիշատակս վկայիցն բերելոց ժամագրեաց ի տօն մեծ հռչակել, սնոտեացն պաշտման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոյ տօնին, հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղոջ պաշտէին յուրախութեան նաւասարդ աւուր: Զի ժողովել ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու և սրբոյ վկային Աստուծոյ Աթանագինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տօնեսցին»¹⁴:

Այսպիսով կարելի է ենթադրել, որ նավասարդի որոշակի ամսանուն դառնալը տեղի է ունեցել ավելի ուշ, քան երբ այն Ամանոր նշանակությամբ մտել է հայոց լեզվի մեջ, այսինքն երբ հայերն ընդունելով լուսնա-արեգակնային տոմարը, պետք է որոշակիորեն սահմանագծեին տարվա մեջ մտնող

¹² Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 106:

¹³ Փափստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 181—182:

¹⁴ Ազաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 435, 836:

ամիսները և նրանց տային առանձին անուններ: Դրա արձագանքն ենք գրտնում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, ուր պատմվում է, որ Արտաշես թագավորի օրոք ստեղծվում է հայկական տոմարը, Արտաշեսի առանձնակի ուշադրություն է դարձնում շաբաթների, ամիսների հերթականության և տոմարական տարվա հաստատման վրա:

«Զի թեպետ և այլն ամենայն, զի յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն կարգք և սովորութիւնք զգեղեցիկք հաստատեացն ՚ի Վաղարշակայ և յայլոյ առաջնոց թագաւորացն՝ այլ ՚ի մեծսմեծ արուեստից և ՚ի դիտութեանց ունայնացեալք էին, որպէս հէնից և ասպատակաց պարապեալք, և այսպիսի դիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զշաբաթոց ասեմ և դամսոց և զտարեաց բոլորմանց»¹⁵:

Մովսես Խորենացու հայտնի հատվածում, ուր նա պատմում է հայոց Տիգրան թագավորի կողմից իր եղբայր Մաթանի գերեզմանի վրա բազին կառուցելու մասին, նավասարդն արդեն օգտագործվում է իբրև ամսանուն:

«Յորում պատմէ ի մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաթանայ քրմապետի ի Բագնացն ասանի, որ ի Բագրևանդ գաւառի, Բագին ի վերայ գերեզմանին շինեալ զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեացեն, և ընդունիցին հիւրք երեկոթիւք: Յորում և զկնի Վաղարշ տօն շախարհախումբ կարգեաց ի սկզբան ամին նորայ, ի մուտն նաւասարդի»¹⁶:

Ակներև է, որ Մովսես Խորենացու մոտ պահպանված են այն ժամանակների արձագանքները, երբ նոր էր ձևավորվում հայկական տոմարը, երբ աստղագիտական, տիեզերագիտական նախնական դիտելիքները տոմարի ու տոմարագիտության տեսք էին ընդունում:

Գրիգոր Մագիստրոսի «Խղթերում» պահպանված, Արտաշես Ա թագավորին վերագրվող երգը շատ է հիշատակվել հայագիտության մեջ¹⁷: Հատկանշական է, որ նավասարդյան այդ երգը դարձյալ կրում է ուրախ, առատ, շեն ու հաբուստ օջախի, որսորդության, խնջույքի, երգի և երաժշտության նույն պատկերը, ինչը այնքան բնորոշ է առհասարակ ամանորյա հմայական երգերին:

15 Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, գիրք Զ, գլ. ԾԹ, էջ 186:

16 Նույն տեղում, գիրք Զ, գլ. ԿԶ, էջ 200: Մեհենական շրականությունից Պատմահորը ժառանգված այս տեղեկությունը անդհահատելի մի բեկոր է հայոց նախաքրիստոնեական կենցաղի, ավանդությունների, մտածողության մասին: Ըստ այդ հաղորդման, հայոց Ամանորն իսկապես առատության և զոհաբերական հմայությամբ զալիք տարին ապահովելու շնչուն ունի, մասնակից անելով դրան պատահական անցորդներին, մի սովորություն, որ մնացել էր հայոց կենցաղում որպես Ամանորի տոնական ցիկլի հատկանիշ մինչև XIX դարի վերջը:

Խորենացու պատմության այս հատվածը բազմիցս եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում և կարելի է կարծել, թե այլևս այն սպառված է: Սակայն հեթանոս Հայաստանի դիցարանի ուսումնասիրությունը մեզ դարձյալ ու դարձյալ վերադարձնում է Պատմահորը:

17 Մ. Արևելյան, Երկեր, հատ. Ա, էջ 121—122: Այստեղ այն վերագրվում է Արտաշես III-ին:

Ո՛ւ տայր ինձ զծախս ծխանի
 Եվ զառաւօտն նաւասարդի
 Զվազելն Լղանց
 Եվ զվարգելն Լղջերուաց.
 Մեք փող հաւուաք
 Եվ քմրկի հաւկանէաք,
 Ուրպէս օրէն է քաղաւորաց¹⁸։

Անկներե է, որ դարերի ավերածությունից փրկված նավասարդյան տոնակատարության փշուրները, որ մեզ են հասել այս երգի մեջ, դարձյալ տալիս են Ամանորի նույն պատկերը, ինչ ունենք այլ աղբյուրներից։

Անհրաժեշտ է ավելացնել միայն, որ պատահական չպետք է համարել, որ Մովսես Խորենացու մոտ հայոց տոմարը հաստատելը այդ նույն թագաւորին է վերագրված։ Հնարավոր է, որ հայ պատմագրությունը այդքան կարևոր դեր կատարած մի խոշոր իրադարձություն կապեր լեզենդար թագաւորի անվան հետ, անուն, որի շուրջ այնքան սիրով և երախտագիտութեամբ հյուսվել էին հերոսական և ողբերգական վիպասքներ և սրունք դարեդար պատմելով մէկին, հաքստացվում, գեղեցկացվում։

Հայոց ազգային տոմարի ձևավորման այդ վաղնջական ժամանակների տրձադանքը մեր մատենագրության մեջ պահպանվել է նաև մի այլ ավանդություն ձևով, որ հաղորդում է Անանիա Շիրակացին։

«...Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայ՝ յազգէ Յաբեթի որդւոյ, նոյի, եկեալ ի Բաբելոնէ՝ տիրեաց հայոց։ Եւ բնակեալ ի Հայս. և յանուն նորա կոչեացն հայք. նոյնպէս որդւոց և դստերաց նորա եղին ի վերայ ամսոյդ՝ վասն մեծարանաց հօրն և զաւակացն. և են այսոքիկ. Նաւասարդի, Հոռի, Սահմի և Մահեկի, Արեգ և Մարերի, դստերք էին Հայկին, Տրէ, Քաղոց, Արաց և Հրոտից, որդիք էին Հայկին։ Իսկ Մարդաց և Հարավանց, զոր այժմ Ահեկի կոչեն, այս ի գործոց անուսնեցան, զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սորա»¹⁹։

Ավանդությունը հարևանցիորեն հիշատակում է նաև Հովհ. Իմաստասերը. «...Հայկն,— ասում է նա,— առաջին նահապետն հայոց, դամիսքդ կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամսոյդ կոչեաց»²⁰։

Ավանդությունը տվյալ դեպքում հետաքրքիր է նրանով, որ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ իսկապես նավասարդ անունը (Ամանորի նշանակությամբ) մեր լեզվում ինչ-որ որոշակի ժամանակ է դարձել որոշակի ամսվա անուն, և ոչ թե ի սկզբանե ունեցել է այդ իմաստը։ Իսկ մեզ հասած ավանդությունների պետք է համարել այն ժամանակների արձագանքները, երբ նավասարդը հայկական ազգային տոմարում պրավում էր իր հաստատուն տեղը, դառնում էր տարվա առաջին ամիսը։

Տոմարական կարգի մեջ կատարված փոփոխությունների հետևանքով նավասարդը որոշակի ամսվա անուն դառնալով (Ամանոր, Տարեմուտ իմաս-

18 Կ. Կ ո ս տ ա ն ե ա ն ց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 37։

19 Ա ն ա ն ի ա Շ ի Ր ա կ ա ց ի, Տիեզերագիտութիւն և տօմար, Երևան, 1940, էջ 76—77։

20 Ա շ. Ա Ր Ր ա հ ա մ յ ա ն, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 224։

տով) ամիսների հերթական շարքում համարվեց առաջինը և զուգակշիռ գարնանային օրահավասարին՝ հոռմեական մարտ ամսին:

Հայոց տոմարի պատմության, ինչպես նաև տոմարական ու տոմարագիտական այդ բարդ խնդիրների մասին հայագիտության մեջ տարահայտվել են առ այսօր իրենց գիտական արժեքը պահպանած տեսակետներ: Դեռևս Գևորգ Ալիշանը կարծիք է հայտնել, որ հայերը հնում Ամանորը տոնել են գարնանային օրահավասարին²¹: Նույն խնդրին անդրադարձել են Լ. Սեմյոնովը²² և Աշ. Աբրահամյանը²³:

Սակայն գարնանային օրահավասարով սկսվող տոմարական այդ կարգը հետագայում, Հայաստանի սելտական-քաղաքական կյանքի զարգացման հետևանքով դադարեց գոհացուցիչ լինելուց, և տոմարագետների առաջ նոր խնդիր ծառացավ՝ գտնել կյանքի նոր փուլին համապատասխանող տոմար:

Այդ նոր տոմարը տարեակիզբը գարնանային օրահավասարից տեղափոխեց աշնանային օրահավասար:

Միջնադարյան հայկական տոմարի մեջ իր արտահայտությունն է գրտել տոմարի զարգացման ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ փուլը: Մաղաքիա Օրմանյանն, օրինակ, գտնում է, որ հայկական տոմարի մեջ խառն շտապործվում են տոմարական երկու կարգն էլ՝ արեգակնայինը, որով հաստատվում էին Աստվածահայտնության բոլոր տոները (հունվարի 13—15-ը) և լուսնային՝ որով որոշվում էին մնացած տոնական օրերը²⁴:

Տոմարական հաշվումների հիման վրա Լ. Սեմյոնովը գտնում է, որ լուսնա-արեգակնային տոմարը, որի նոր տարվա տոներ նավասարդի 1-ն է (օգոստոսի 11-ը), հայերը ընդունել են մ. թ. ա. 460 թ.²⁵: Հետևաբար, նավասարդը տարվա ամիսների շարքում հաստատուն տեղ ունեցող ամիս դառնալուց առաջ, արդեն ունենալով միայն Տարեմուտ-Ամանորի նշանակությունը, տեղաշարժվում էր լուսնա-արեգակնային տոմարի առանձնահատկության հետևանքով:

Տոմարական հաշվումների հիման վրա Դյուլոբրեն մարտի 22—նավասարդի 1-ը՝ գարնանային օրահավասարը, տարվա սկիզբ, Ամանոր դարձնելը դնում է մ. թ. ա. 529—532 թթ. 4-ամյա շրջանի տարիներից մեկում²⁶: Հնարավոր ենք համարում ենթադրել, որ նավասարդի որոշակի ամսվա անունը դառնալը ևս կարելի է վերագրել այդ ժամանակին, կապված նրա հայկական ամիսների շարքում որոշակի, հաստատուն տեղ գրավելուն:

Նավասարդ բառից բացի, հայերը նոր տարվա տոնի համար ունեին նաև Ամանոր բառը: Երբ նրանք ընդունեցին ավելի կատարյալ տոմար, նավասարդը դարձավ տարվա առաջին ամսվա անունը: Սակայն Ամանորը շարու-

21 Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց հայոց, հատ. 1, Վենետիկ, 1869, էջ 88: Նույնի՝ Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, 1895, էջ 139:

22 Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին: «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», Երևան, 1941, № 1, էջ 24:

23 Աշ. Աբրահամյան, Տարեթվերի և ամսաթվերի դործածությունը հայ մատենագրության մեջ, «Էջմիածին», 1956, № 1—3, էջ 55:

24 Մաղաքիա Օրմանյան, Միսակոն բառարան, Անթիլիաս, 1957, էջ 11—12:

25 Լ. Սեմյոնով, Նշվ. աշխ., էջ 24:

26 E. Du laurier, Recherches sur la Chronologie Arménienne Technique et Historique, t. 1^{er}, Paris, 1899, էջ 189:

նակում է «թափառել» նաև այս տոմարում: Այդ պատճառով, ինչպես մեր քննարկած մատենագրական սոմարական նյութերը ցույց են տալիս, նավասարդը օպտագործվում էր և՛ որպես տարվա առաջին ամսի, և՛ որպես Տարեմուտի, Ամանորի տոնի անվանում: Նավասարդը, որ կապված էր տարվա առաջին ամսի հետ և ավելի հասկանալի էր իր Տարեմուտ, Ամանորի իմաստով, աստիճանաբար դուրս է մղում ամանոր բառը և բռնում նրա տեղը:

Հայկական տոմարի առանձնահատկության համաձայն Ամանորը շարժական էր: Սակայն հեթանոս Հայաստանում տոմարական հաշվումները ճիշտ կատարելու համար, պայմանականորեն Ամանորը համարում էին օգոստոսի 11-ը, Հայկա շրջանի ապոկաստաղի օրը²⁷: Վերջինս Նավասարդի 1-ի հետ համընկնում էր մ. թ. ա. 428 թ.: Այս թիվն էլ հեթանոսական Հայաստանում պայմանականորեն հիմք էր ընդունված տոմարական հաշվումների համար: Պաշտոնական տոնացույցներում այդ օրը շարժական էր: Սակայն նույն տոնացույցի առանձնահատկության համաձայն, ամիսներն արդեն իրենց հերթական տեղն ունեին, և Նավասարդը հայկական անշարժ ամսացուցակում առաջին ամիսն էր:

Ամանորի այս պայմանական սկիզբն էլ մնում է տոմարագիտության մեջ և անցնում գրավոր աղբյուրներին:

XX դ. սկզբին Հայաստանի մի քանի ազգագրական շրջաններում Նավասարդը դեռ հիշվում և տոնվում էր որպես նոր տարվա տոն: Միայն վերջին 50 տարվա ընթացքում էլ այն դուրս մղվում ասպարեզից և իսպառ մոռացվում նույնիսկ այն շրջաններում, ուր մինչ այդ տոնվել էր որպես նոր տարի: Այսպես, օրինակ, Եր. Հալաջանի հաղորդման համաձայն, Սիսիանում և Զանգեզուրում Նավասարդի մեկը տարեմուտ է համարվել²⁸: Սակայն 1959 թ. այդ շրջաններում կատարած մեր շրջագայությունների ժամանակ նման ոչ մի բանի չհանդիպեցինք: Ըստ որում, եղանք հատկապես այն գյուղերում, որոնք մատնանշում է Եր. Հալաջանը: Դորիսի շրջանի գյուղերում (Քարահունջ, Շիմուհայր, Խանածախ) մի քանի ծերունիներ հիշում էին, որ մինչև 1920-ական թթ. Նավասարդը համարվել է նոր տարի: Դրանից հետո Նավասարդի տոնը, որպես նոր տարվա տոն, մոռացել են, բայց նրա հետ կապված ծիսական տրոշ սովորություններ հիշվում են տակավին²⁹:

Նույն երևույթը տեղի է ունեցել նաև Հին Նախիջևանի հայերի կենցաղում: Եթե Ս. Զելինսկու հաղորդած տվյալներով դեռևս XIX դարի վերջերին Նավասարդի տարեմուտ լինելու վերաբերյալ հավատալիքները այդ շրջանի բնակչության կենցաղում որոշակի տեղ էին գրավում, ապա, այժմ, մեզ հայտնի հինգ ընտանիքներից ոչ մեկում, որոնք բոլորն էլ XX դ. 20-ական թթ. վերաբնակվել են Երևանում, նույնիսկ 60—70 տարեկան ծերունիները չեն

27 Ապոկաստաղ—Տարին 365 և $\frac{1}{4}$ օր ընդունելով, արեգակնային տոմարում 4 տարին մեկ անգամ Ամանորը 1 օրով առաջ էր ընկնում (այստեղից, այդ տոմարի մեջ տոների շարժական լինելը), և հաջորդաբար համընկնելով տարվա բոլոր օրերին, որոշ ժամանակից հետո վերադառնում էր իր նախկին տեղը: Այդ կետն էլ ապոկաստաղն է: Բսկ այդ ամբողջ ժամանակամիջոցը, որի մեջ թափառում էր Ամանորը, հայերն անվանում էին «Հայկայ շրջան», որ տեղում էր 1468 տարի: Ապոկաստաղի տարին հայերն անվանում էին «Նահանջներու նահանջ տարի» (տե՛ս Մ. Օրմանյանի և Լ. Սևոյնովի նշված աշխատությունները):

28 «Ազգագրական հանդես», 1898, գիրք 1, էջ 49 և գիրք 2, էջ 106:

29 ՀՄՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ:

հիշում, որ իրենց երիտասարդության ժամանակ նավասարդը տոնված լինի որպես նոր տարի:

Այն քիչ ազգագրական շրջաններում էլ, որտեղ նավասարդը տակավին հիշվում է որպես նոր տարվա տոն, մոռացված են այդ տոնի հետ կապված ծիսական սովորությունները, որոնք առանձին բովանդակություն ու երանդ պետք է տալին տոնին: Տեղի է ունեցել նաև հակառակը. պահպանվել են տոնի հետ կապված որոշ սովորություններ, իսկ տոնն ինքը մոռացվել է: Սակայն անկախ այն բանից, նավասարդը ղեռ հիշվում էր որպես նոր տարվա տոն, թե ոչ, նրա ծիսակարգի մեջ մտնող որոշ սովորություններ համընդհանուր էին պատմական Հայաստանի բոլոր ազգագրական շրջանների համար: Այսպես, օրինակ, այդ օրն ամենուրեք կորկոտ (հարիսա) էին եփում, որպես նոր սկսվող տարվա դաշտավարական տնտեսություն առատությունն ասպհովող խորհրդանշան: Այդ օրվա համար համընդհանուր սովորությամբ էր նոր խրանամիների երգիկից շարոց կախելը: Այլ տեղերում այդ օրն ընդունված էր չոր մրգեղենի կապոցներ կախել ծանոթ-ազգականների, մանավանդ քաղաքացիներից և խնամոնց երգիկներից և աննկատելիորեն հեռանալ: Ըստ երևույթին, այդ սովորությունը մնացել էր այն ժամանակներից, երբ այդ օրը նոր տարվա առթիվ նմանօրինակ նվերներով շնորհավորում էին միմյանց³⁰: Նույնքան համընդհանուր սովորություն էր նշանված աղջիկներին այդ օրը սկեսրանց տանից նվերներ (չոր մրգեղենի հետ զխաշոր, գուլպաներ և այլն) ուղարկելը: Ուրիշ շրջաններում նավասարդի օրը այդպիսի նվերներ հարսնացուի տնից էին ուղարկում փեսացուի տուն³¹: Այլ դեպքերում կանայք բրբազան համարվող ծառերի վրա կարմիր կտորներ էին ձգում և կարմիր թելեր կապում ի նշան ուրախության և այն բանի, որպեսզի գալիք տարին առատ, ուրախ լինի և կարմիր (ուրախ) օրերը շատ լինեն³²:

Ձանդեղություն, օրինակ, այդ օրվա գիշերը գոմերը մաքրում էին, անասունների տակ գարի ցանում, իսկ եղջյուրներին կարմիր թել էին կապում, որպեսզի տարին առատ լինի և «կարմիր օրերով» անցնի³³:

Պատմական Սյունիք նահանգում, որտեղ մելիքական տներն իրենց գոյությունը պահպանեցին շատ երկար, սովորություն կար, որ նավասարդի օրը գյուղի յուրաքանչյուր օջախից ամենատարիքավոր և պատկառելի վերջնում էր մի շիշ օղի, կամ գինի, մի խնձոր՝ վրան 15—30 կոպեկ և զնում

30 Վ ա Ր Գ Ե Ս, Հայոց սովորություններից (հիշողություններ), Վնոր-Դարս, 1886, № 211: Տե՛ս նաև՝ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ:

31 «Ազգագրական հանդես», գիրք 2, 1900, էջ 249, գիրք Դ, 1898, № 2, էջ 71:

32 Հիշենք նաև նոր տարվա երգերի մեջ՝

Լի՛քր հոբեր շատ ունենա՛մ.

Կարմիր օրեր շատ ունենա՛մ.

Կարմիր օրով. Կարմիր շոբով.

Ուրախ կենա՛մ միշտ կուշտ փոբով:

Հիշենք նաև, որ հմայական բնապաշտական մտայնությամբ սրբազան ծառերին հագուստներից պոկված գունավոր, մասնավորապես կարմիր կտորներ կապելով կարծում էին, թե կարելի է անհաջողությունից, հիվանդությունից ազատվել: Այսպիսի սրբազան ծառեր պատմական Հայաստանում շատ են եղել և հիմա էլ որոշ տեղերում ղեռ կան: Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ:

33 «Ազգագրական հանդես», 1898, 2, գիրք Դ, էջ 112:

մելիքի նոր տարին շնորհավորելու: Սա էլ երախտահատույց լինելու համար մի երկու եզ էր մորթել տալիս և դաշտում լողորին հյուրասիրում ճաշով³⁴: Մելիքական տները վերանալուց հետո նավասարդին նվերներով շնորհավորելու գնում էին տանուտերերի տուն և տանտիրոջ կողմից հյուրասիրվում³⁵: Վարանդայում ընդունված էր այդ ձևով շնորհավորելու գնալ քահանայի տուն, դարձյալ արժանանալով վերջինիս հյուրասիրությանը³⁶:

Ս. Զելինսկին հաղորդում է, որ նախիջևանի շրջանում ապրող հայերը ունեն նավասարդի տոնակատարության հետ կապված ավանդություններ: Պատմել են, օրինակ, որ նավասարդը նոր տարվա սկիզբն է համարվում, որովհետև այդ օրը հայերը մեծ հաղթանակ են տարել: Այս ավանդությունն, ինչպես հայտնի է, առկա է Մովսես Խորենացու մոտ, ուր նկատի է առնված Բելի դեմ Հայկ նահապետի տարած հաղթանակը: Ուշագրավ է հատկապես նավասարդի առնչությամբ ժողովրդի մեջ հարատևող նաև հետևյալ ավանդությունը, որ դարձյալ հիշատակում է Զելինսկին: Մի անգամ Գրիգոր Լուսավորչին հայտնում են, թե Տարոն գավառում մի խումբ հայեր դեռևս շարունակում են երկրպագել ընդարձակ տաճարում դրված երեք ոսկյա կուռքերին: Լուսավորիչն իր հետ վերցնելով մի սրբի մասունքներ, գալիս է Տարոն և հասնում է տաճար նրա մեծ տոնակատարության օրը: Ուխտավորների բազմության առաջ նա հրամայում է ջարդել արձանները և նրանց տեղը կանգնեցնել խաչ, իր բերած մասունքների հետ: Սակայն որպեսզի ժողովրդին միանգամից չբարկացնի, թույլ է տալիս շարունակ այդ օրը նշել տոնակատարությամբ, իսկ տոնը վերանվանվում է Սուրբ Խաչ³⁷:

Հատկանշական է, որ մինչև այժմ էլ այդ օրը, մանավանդ այն շրջաններում, որտեղ մոռացվել է նավասարդի նոր տարվա տոն լինելը, անպայման նշվում էր հատուկ արարողություններով: Ավանդությունը հատկապես վկայում է, որ նավասարդը նախաքրիստոնեական Հայաստանի ամենատարածված և սիրված տոներից է եղել, որի հետ հաշվի են նստել նոր տարածվող քրիստոնեության վարդապետներն անգամ և նոր կրոնի անվան տակ այն պահպանել: Ծիշտ է, թեև դարերի ճանապարհին մոռացվել էր տոնի հետ կապված ծիսական սովորությունների հիմնական մասը, այնուամենայնիվ ժողովրդական կենցաղում և հավատալիքներում շարունակել են հարատևել դրա հեթանոսական բնույթի տոնական վերապրուկները: Նավասարդյան տոնախմբությունների հեթանոսական ծիսակատարությունների միջոցով հին հայերը նպատակ էին հետապնդում երախտահատույց լինել բարեհաջող բերքահավաքի, վերահաս ձմռան տնտեսական ապահովվածության համար: այն աստվածությունը, որի հետ զարգացման տվյալ փուլում հայ ժողովուրդը կապում էր նոր տնտեսական տարվա ապահովության ակնկալիքները: Մինչև մեր օրերը պահպանված ազգագրական սովորությունները վկայում են, որ նավասարդի տոնը ժողովրդի կողմից իրոք դիտվել է որպես բերքահավաքի տոն, գյուղացու աշխատանքային տարվա փակում, որն սկզբնավորվում էր դար-

34 «Ազգագրական հանդես», 1898, 1, գիրք Բ, էջ 259:

35 «Ազգագրական հանդես», 1898, 1, գիրք Բ, էջ 259 և «Ազգագրական հանդես», 1898, 2, էջ 112, «Ազգագրական հանդես», 1898, 1, էջ 257--258:

36 «Ազգագրական հանդես», 1898, 1, գիրք Բ, էջ 349:

37 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. II, отд. II, էջ 20:

նանը և նշանավորվում տնտեսական տարվա սկիզբը հանդիսացող Բարեկենդան տոնով:

Ս. Զելինսկու հաղորդման համաձայն, Նախիջևանի հայերի մեջ դոյություն է ունեցել մի այսպիսի սովորություն. Նավասարդի օրը 10—12 տարեկան տղա երեխաները շրջել են տնետուն և երդիկից փուլպան իջեցնելով երգել.

Ակլը մարեմ, մարեմ,
Չեր տղայի սոլը կարեմ,
Չամիշ տվեմ
Ատամներս շարեմ,
Ընկույզ տվեմ
Ճակտիս դնեմ
Նուշ տվեմ պուրտս ոլորեմ:

Իսկ տնեցիք ներքեից մրգեղեն են լցրել փուլպան, որը նրանք վերև են բարձրացրել և բոլորը միասին կերել³⁸:

Հիշյալ երգն ու սովորությամբ որոշ ազգագրական շրջաններում նույնությամբ կրկնվել են Բարեկենդանին, Նավասարդին և քրիստոնեական Նոր տարուն և իրենց նմանողական-հմայական բովանդակությամբ առնչվել են վերոհիշյալ տոների ժամանակ կատարվող նույնանման ծեսերին ուղեկցող երգերին և հավանաբար ժամանակին եղել են տնտեսական բարեկեցությունն ապահովող հմայական ծեսերի պարտադիր ուղեկիցներ: Այն ամենը, ինչ պահանջվում էր երգով, յուրաքանչյուր գյուղացու տան մեջ կարող էր գտնվել միայն բերքահավաքից հետո, երբ ամբողջ տնտեսական տարվա արդյունքն արդեն ամբարված էր շտեմարաններում: Երգն ստեղծողները հենց այդ էլ նկատի են ունեցել: Իսկ այդ նույն օրը երեկոյան կորկոտ և շոր մրգեղեն ուտելու պարտադիր սովորությունն արդեն ակնհայտորեն խոսում է այն մասին, որ դրանք իսկապես եղել են բարեհաջող բերքահավաքից հետո բնության ուժերին նվիրված շնորհակալական-զոհաբերական նախկին ծեսերի արտահայտություններ:

Բարեկենդանին, Նավասարդին և քրիստոնեական Ամանորին ուղեկցող ձիսական երգերի բովանդակության նույնությունը և հաճախ էլ դրանց բնա-

³⁸ Նույն տեղում: Երգի տարբերակն ունենր նաև Սալմաստից, ուր խվիլիկի տոնին (Նավասարդ) 8—12 տարեկան երեխաների խումբը տնետուն շրջելով, երդիկներից գուլպա էր կախում և երգում.

Ակլե մարեմ, մարեմ, մարեմ,
Չեր տղայի սոլը կարեմ,
Չամիշ տվեմ ատամներս շարեմ,
Ընկեռզ տվեմ՝ փորս լարեմ,
Շաֆար տվեմ՝ շայ խմեմ,
Պեղուկ տվեմ՝ սիրտս ուզելի,
Կարկուտ տվեմ՝ փորս լցնեմ,
Քյոխվա տամուեր, մի խնայի
Աստված ձեր խաբս ու փեսան պախի:

Ս. Սալմաստիցի, խվիլիկ, «Արևազանք», 1893, № 1 (տե՛ս վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր, Երևան, 1963, էջ 141):

գրերի ուղղակի կրկնությունը կարելի է բացատրել նրանով, որ դրանք արտահայտել են նույն մտայնությունը և ժամանակին ուղեկցել են գարնանային Նոր տարվա տոնակատարությանը: Նոր տարին պաշտոնապես աշուն տեղափոխելուց հետո մինչ այդ նրան ուղեկցող ծիսական երգերը նույնպես տեղաշարժվեցին: Այդ միևնույն ձևով նրանք հետագայում միացան նաև քրիստոնեական Ամանորին՝ հունվարի 1-ին, իսկ ապա նաև Քրիստոսի ծննդյան տոնին:

Այս առիթով պետք է նշել, որ Ամանորի նախաքրիստոնեական տոներից Բարեկենդանի հետ կապված ծիսական սովորություններն անհամեմատ ավելի լավ պահպանված վիճակում են մեզ հասել, քան Նավասարդի: Նկատենք, որ Նավասարդի հետ աղերսվող սովորություններից մեզ հասել են նրանք, որոնք իրենց ծագման պատճառներով և բովանդակությամբ նույնական են Բարեկենդանի ծիսական սովորություններին: Բացի այդ, ինչպես արդեն հիշատակվել է, կան նաև այնպիսի սովորույթներ, որոնք կրկնվում են և Բարեկենդանի, և՛ Նավասարդի ծիսաշարքում: Նման կրկնությունները բնապաշտական եռույն կամ նման մտայնության արտահայտություններից բացի, նույնական լինելու համար ունեցել են նաև այլ հիմքեր:

Նավասարդ ամսին կատարվող տոներ մինչև արեգակնային տոմարով Նոր տարվա օր դառնալն արդեն գոյություն ունեւ որպես բերքահավաքի տոն: Այդ են վկայում Նավասարդի հետ առնչվող ծիսական այն սովորությունները, որ հայ գյուղացին դարերի խորքից բերել, հասցրել է մինչև մեր օրերը: Եվ բնավ էլ պատահական չէ, որ Նավասարդը այդ ձանապարհին կորցնելով շատ հատկանիշներ, պահպանել է հենց այն ծիսական սովորությունները, որոնք ակնարկում են բերքահավաքի հետ ունեցած նրանց և տոնի բացահայտ առնչակցությունը:

Այդ առնագծով շատ հետաքրքիր է այն, որ Նավասարդյան բերքահավաքի ծիսական փնջի վերապրուկների մի մասը, միաձուլվելով Աստվածածնի տոնին, հասել է մինչև մեր օրերը: XIX դարում Աստվածածնի տոնին կատարվում էր խաղողօրհնների ծեսը, որ հատկապես տնտեսական երանգ էր ձեռք բերել Արարատյան դաշտում, ուր միայն այդ օրվանից սկսած էր թույլատրվում վաճառել կամ օգտագործել արդեն հասունացած խաղողը: Այժմյան Մարտունու շրջանում ապրող նախկին ավազկերտցիների մեջ տարածված է եղել դրա հետ առնչվող մի շատ ուշագրավ սովորություն: Մինչև XX դ. 30-ական թթ. էլ ընդունված է եղել համայնքից (Վերին Ղարանլուղ) դրամ հավաքել և այդ նպատակով հատուկ ընտրած մարդկանց ուղարկել Արարատյան դաշտ՝ խաղող բերելու, որը ճանապարհին Սևանի վանքում օրհնել տալուց հետո բաժանվում էր գյուղի բնակիչներին: Դրանից հետո միայն կարելի է եղել գյուղ բերած խաղողը դնել և ուտել³⁹: Բանն այն է, որ մինչև բարձրագիր և խստաշունչ Սևանի ավազան գաղթելը, իրենց նախկին բնօրրանում ավազկերտցիները զբաղվել են խաղողագործությամբ և այդ պատճառով էլ պահել դրա հետ կապված ծիսական հուշը:

Ընչ վերաբերում է Նավասարդյան տոնախմբությունների և Մարիամ Աստվածածնի տոնի խաչավորման փաստին, ապա այն համընդհանուր էր

39 ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և աղագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ:

ամբողջ Հայաստանի համար և կապվում էր քրիստոնեության մուտքի հետ։ Անահիտ զիցուհու պաշտամունքը, որ այնքան տարածված էր նախաքրիստոնեական Հայաստանում, նորամուտ քրիստոնեության համար ամենամեծ վրտանդն էր։ Պետական կրոն դառնալու առաջին քայլերի հետ, քրիստոնեությունը ներառում ժողովրդական դանգվածների մեջ առանձնահատուկ տեղ ունեցող Անահիտ զիցուհու տոնական ցիկլը և, մոռացնել տալու նպատակով այն կապեց Մարիամ Աստվածածնի հետ⁴⁰։

Նավասարդի տոնակատարության ստույգ ժամանակը նույնպես որոշ շրջաններում մոռացվել է, իսկ որոշ տեղերում՝ տեղաշարժվել։ Այսպես, Խրն-ձորեսկ, Շինուհայր, Խանածախ գյուղերում նավասարդի տոնակատարությունը, որ իր ծիսական արարողություններով ժողովրդի մեջ պահպանվել էր մինչև XX դ. 20-ական թթ., տեղաշարժվելով, վերջնականապես հաստատվել է նոյեմբերի կեսերին, չնայած որոշ տեղերում այն տոնվում է օգոստոսի կեսերից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակամիջոցում։ Այժմ Մարտունու շրջանում ապրող պատմական Դարույնք, Կոզովիտ և Բադրեանդ գավառներից զաղթած հայերի մեջ, թեպետ նավասարդն իբրև նոր տարվա տոն կենցաղից բոլորովին դուրս է եկել, սակայն ոմանք մինչև այժմ էլ հիշում են, որ այն հեռավոր անցյալում հայերի մեջ եղել է նոր տարվա տոն։

Նավասարդը թե՛ ժամանակի, թե՛ բովանդակության տեսակետից եկել, մոտեցել է քրիստոնեական նոր տարուն՝ հունվարի 1-ին և իր հատկանիշները հաղորդելով վերջինիս, ձուլվել է նրան։ Միայն թե հունվարի 1-ը քրիստոնեական այլ անունների կողքին (նոր տարի, Կաղանդ) ունի նաև «Նավասարդ» անունը՝ «նոր տարի» իմաստով։ Բացի այդ, նավասարդ տոնի որոշ ծիսական սովորություններ գրեթե նույնությամբ անցել են նոր տարվա տոնին⁴¹։

Որոշ շրջաններում էլ մոռացվել է նավասարդի տոն լինելու հանգամանքը և այն հիշատակվում է որպես միայն տնտեսական պայմանագրությունների սահմանագիծ։ Այդպես է, օրինակ, Իջևանի շրջանի Աշաջուր և Ուգունթալա (այժմ՝ Այգեհովիտ) գյուղերում։ Այդպես է նաև Արարատյան դաշտում, այժմյան Հոկտեմբերյանի շրջանի Փշատավան և Զանֆիղա գյուղերում ապրող, Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի մեջ։ Չնայած Դորիսի շրջանի մի շարք գյուղերում նավասարդը դեռ հիշվում է որպես տոն և նոր տարվա սկիզբ, սակայն հարևան Քարահունջ գյուղում մոռացվել է նրա տոն լինելու հանգամանքը. գիտեն միայն, որ դա մի օր է սեպտեմբերի սկզբից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակամիջոցում։ Եվ դարնանր, երբ անասունները պահ տալիս պայման են դնում, պարտականությունների և իրավունքների սահմանագիծը համարում են մինչև նավասարդ։

Ազգագրական որոշ շրջաններում այս երևույթն սկսվել էր արդեն XIX դ. երկրորդ կեսերից։ Այդ առթիվ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ս. Քամալյանցը՝ Արցախի, Ուտիքի, Սյունիքի, Աղվանք և Այրարատի, վե-

40 Մ. Օղարայան, Պիտական բառարան, էջ 36։ Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ զիցուհու պաշտամունքը, էջ 138—156։

41 Տե՛ս Ա. Ա. Օղարայան, Նոր տարվա տոնակատարության ժամանակի հարցի շուրջը։ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2։ Նույնի՝ Քրիստոնեական ամանորի մի քանի ծիսական վերադրուկների մասին, ՀՍՍՀ ԻԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 3։

րաբերյալ: Պնդելով, որ վերը նշված շրջաններում ժողովուրդը Նավասարդը որպես նոր տարի տոնում է խոր աշնանը, այդեկութից հետո, նա ավելացնում է, որ այդ նույն դավառներում Նավասարդը համարվում է տնտեսական պայմանադրությունների սահմանադիմ⁴²:

Այս սովորության մեջ ևս տեսնում ենք վերապրուկային արձագանքն այն ժամանակների, երբ բերքահավաքին նվիրված Նավասարդ տոնը դիտվում էր որպես տնտեսական տարվա ավարտին նվիրված տոն: Ըստ որում այն վերաբերում էր ոչ միայն երկրագործական աշխատանքներին, այլ նաև անասնապահությանը:

Հայտնի է, որ անասնապահության բնագավառում տնտեսական տարին սկսվում էր ավելի շուտ և վերջանում ավելի ուշ, քան երկրագործության: Թերևս այս է պատճառը, որ երկրագործության մեջ, Նավասարդը տնտեսական տարվա ավարտ ընկալելուց հետո տեղական պայմանների համաձայն հաճախ տեղաշարժերի էր ենթարկվում: Չմոռանանք, որ Նավասարդի տնտեսական պայմանադրությունների ժամանակակետ լինելը մեզ հայտնի է XIX դարի երկրորդ կեսերից սկսած, երբ ժողովուրդն արդեն մոռանում էր Նավասարդի ամսնորյա ծիսական սովորությունները, իսկ կենցաղում քրիստոնեության հաստատման հետևանքով մոռացվում էր նաև Նավասարդի նոր տարվա տոն լինելը: Այդ բոլորի հետևանքը լինում է այն, որ տնտեսական պայմանադրությունների ժամանակակետ ընկալվող Նավասարդն սկսվում է տվյալ միջավայրի պայմաններին համապատասխան տեղաշարժեր կատարել:

ПЕРЕЖИТКИ ПРАЗДНЕСТВ НАВАСАРДА

А. А. ОДАБАШЯН

(Резюме)

Комплексное изучение источников проливает свет на многие вопросы происхождения, формирования и бытования как армянского народного календаря, так и праздника Навасард.

Праздник Аманора — Новый год, совпадающий с пробуждением природы, представляет определенный этап в развитии астрономических знаний календаря и месяцеслова. Этот период развития календаря в пережиточном виде дошел до наших дней и был связан с весенним праздником Барекендан.

В последующих этапах развития календаря Новый год, по календарным соображениям, официально был перенесен на осень, сливался с праздником сбора урожая и назывался Навасард. Навасардом именовался тот месяц, с которым совпадал блуждающий Аманор. Этот весьма сложный и продолжительный процесс заканчивается в средневековье и находит свое отражение в народном быту.

42 Ս. Ք ա մ ա յ յ ա ն ջ, Երկաթի դարի սովորություններ, ամսագիր, Թիֆլիս, 1896, էջ 153:

Первое января, как новогодний праздник, вошел в быт народа с большим трудом. Навасард же лишь в конце XIX в. постепенно теряет характер праздника начала Нового года, а в некоторых этнографических районах еще в 30-х годах бытовал как новогодний праздник. Там, где он потерял это значение, четче проявлялись первоначальные черты праздника—сбор урожая, конец хозяйственного года с благодарственными ритуалами.